

սրտին եւ անդորր կենօք մշտնջենաւորել ի հաստատութիւն յաթոռն իւր:

«Եւ քաղաքիս արքայապատիւ թաղակիր մեծ իշխան Կեօրիկ Տիմխորի Պիպէսիոյ վոյ՝ վոտին խաղաղական կենօք ի գահն հաստատութեան:

«Եւ ի տէր հանգուցեալ դպրատանս երախտաւոր արքայապատիւ մեծ իշխան Մանուկ պէյի հոգւոյն արքայութիւն եւ մեղացն թողութիւն:

«Եւ եւս յատկապէս դպրատանս մեծ խնամակալու եւ առատապարգեւ սատարութեամբ մշտնջենաւորող հիմնադրի կայսերապատի եւ հայրախնամ վեհ կեներալ աղա խաչիկ երախտաւորի հօրն մերում եւ ազնուածին զաւակաց եւ համօրէն ընտանեացն անտրտում յարազըլարճ խաղաղական կենացն առաւելութիւն:

«Եւ քաղաքիս Պուքրէչու ազգիս վայելչութիւն, եկեղեցւոյս եւ դպրատանս պայծառութիւն, անձանձիր ջանացող եւ աշխատող էփիթրոսի (հոգաբարձու) եւ ամենայն իշխան աղայից կենացն առատութիւն եւ գործառնութեանցն յաջողութիւն:

«Այլ եւ ամենայն ժողովրդականաց քաղաքիս որք տրովք իւրեանց ջանան յառաջգիմութեան դպրոցիս ամենայն գործոց յաջողութիւն:

«Այլ եւ անձանձիր միամտութեամբ սրտի աշխատող հոգեշորհ վարժապետաց մերոց գերկարութիւն կենաց:

«Եւ եւս ամենայն հիւանդաց եւ ախտաժէտից կատարեալ բժշկութիւն:

«Այլ եւ ամենայն ճանապարհորդաց ի ծովու եւ ի ցամաքի խաղաղութեամբ եւ խնդութեամբ հասանել յիւրաքանչիւր տեղիս:

«Եւ եւս այդեաց եւ անդաստանաց առատ պտղաբերութիւն, օդոյ քաղցրութիւն, եւ ըստ ժամանակին անձրեւոց շահեկանութիւն, տանց եւ բնակութեանց շինութիւն, աղքատաց ընչաւէտութիւն եւ մխիթարութիւն:

«Եւ ամենայն ժողովրդականաց սէր միաբանութիւն եւ ամենայն բարեգործութեանց ջերմեռանդութիւն:

«Եւ մեզ ժողովեալ մանկանցս հրեշտակական պաշտպանութիւն եւ աստուածային ամե-

նազօր հովանաւորութեամբ շնորհք եւ պարկեշտութիւն եւ ի սաստանայական որոգայթից աղատութիւն, եւ ի գիտութիւնս ուսման յառաջգիմութիւն եւ զգաստութիւն»:

* * *

Մեծ բան մը չենք դիտեր Պուքրէչի գըլպրոցին մէկ դարու կեանքին վրայ: Արձանադրութիւնները շատ ժլատ են օրուան դէպքերը խօսեցնելու համար:

1846-47-ին Պուքրէչի հայ դպրոցը արդէն սկսած էր բարդաւաճիլ: Նոյն շրջանի դպրոցական արձանագրութեանց մէջ կը գտնենք Գէորգ, Օհանէս, Ամբակում եւ Ստեփան անուն չորս վարժապետներ: Տեսակ մը խանդավառութեան շրջան է Պուքրէչի համար: Մոլտովայի ոգեւորութիւնն է թերեւս որ արձազանգ տուած է հոս ալ:

1847-ին է որ Պուքրէչի մէջ կը բացուի աղջկանց վարժարան մը եւս: Առաջին հայ աղջկանց դպրոցն է աս Վալաքիոյ շրջանին մէջ: Ան նոյնպէս կը մատնէ այդ օրերու բացառիկ ոգեւորութիւնը:

Կրթական շարժման լծակը Արարատեան անունով ընկերութիւն մըն է: Ան է որ նիւթական միջոց կը ստեղծէ դպրոցական գործը ապրեցնելու եւ մանաւանդ տեւականացնելու համար:

Ռուսանահայ Կեդր. Մատենադարանի մէջ 1848 Օգոստոս 10 թուակիր կոնդակ մը կայ, Պոլսոյ Մատթէոս պատրիարքին կողմէ զրկուած սոյն Արարատեան ընկերութեան: Այս օրհնութեան կոնդակին մէջ պատրիարքը կ'ըսէ թէ «լուաք զձեր Արարատեան ընկերութեան հաստատութիւն եւ զՄիսաքեան շնորհածիր դպրատան բարեկարգ պայծառութիւն եւ զամենից բարեջան ազգասիրութիւն»:

Պէտք է յիշատակել հոս որ պաշտօնական մարմինները եթէ ժլատ գտնուած են յաճախ կամ անփոյթ՝ բացառիկ զոհողութիւններ ընելու կրթական գործին համար, ու իրենց մտահոգութեան առարկան ըրած են միմիայն ժամը, գտնուած են սակայն ընկերութիւններ, ինչպէս Արարատեանը, որոնք սարսափած անդունդէն՝ ուր գահավիժելու կ'երթար դադրութիւն՝ փորձած են բացառիկ ձիգեր հայերէնը